«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ» ՆԿԱՐԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Միջազգային ճանաչու�վաստակած հայ գեղանկարիչ Ռուդիկ Պետրոսյանի «Սահմանադրության ծնունդը» կտավը եզակի է թե՛ մտահղացման եւ թե՛ իրականացման առումով:

Եռանկարի աջ կողմում Գրիգոր Լուսավորիչն է ու Տրդատ թագավորը: Նրանք ապագային սեւեռված հայացքով խորհրդանշում են Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունելու խորհուրդը եւ հայ ժողովրդի արժեհամակարգային կողմնորոշումը:

Կենտրոնում 365 թվականի Աշտիշատի ժողովի վերացարկված ընկալմամբ պատկերումն է, որտեղ բացառիկ վարպետությամբ ներկայացված են.

ա/ ժողովուրդը՝ ինքնաճանաչման եւ սահմանադրորեն ապրելու հաստատակամությամբ,

բ/ արդարադատության խորհրդանիշի ներդաշնակությունը հանրային տրամադրությանը,

գ/ ստեղծված հանրային մթնոլորտում իմաստունների կողմից Սահմանադրության արարումը:

Այս բոլորն ամփոփում են «սահմանադրություն» հասկացության վերաբերյալ 1837 թվականին Վենետիկում հրատարակված՝ Նոր բառգիրք հայկազյան լեզվի եզակի բնորոշումը. «Որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»:

Ձախ կողմում Պատմահայր Մովսես Խորենացին է, ով բացառիկ գնահատական է տվել Աշտիշատի ժողովի կողմից ընդունված Կանոնական սահմանադրությանը՝ «կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն», ինչը մագաղաթի վրա ներկայացնում են հրեշտակները: